

Պ-621-18.05.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության տարածումը կանխելու նպատակով մեկուսացման կամ ինքնամեկուսացման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ մեկուսացման նպաստ):

Սույն օրենքի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Սույն օրենքի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) մեկուսացման:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով.
 «Հոդված 12.1. Վարձու աշխատողին տրվող մեկուսացման նպաստը

Վարձու աշխատողին մեկուսացման նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ ժամանակավոր անաշխատունակության 14 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից:»:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) մեկուսացման:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող մեկուսացման նպաստը

Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց մեկուսացման նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ ժամանակավոր անաշխատունակության 14 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից:»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) եթե վարձու աշխատողը մեկուսացման կամ ինքնամեկուսացման ժամանակահատվածի համար վարձատրվել է (ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) կամ 2 խախտել է մեկուսացման կամ ինքնամեկուսացման պայմանները.»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2020 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Եթե շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության տարածումը կանխելու նպատակով մեկուսացման կամ ինքնամեկուսացման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և մեկուսացման նպաստ նշանակելու համար փաստաթղթերը ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից սկսած վեցամսյա ժամկետում, ապա այդ փաստաթղթերը

համարվում են Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 10-27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության տարածումը կանխելու նպատակով մեկուսացման կամ ինքնամեկուսացման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ մեկուսացման նպաստ):

Սույն օրենքի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Սույն օրենքի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) մեկուսացման:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով.
«Հոդված 12.1. Վարձու աշխատողին տրվող մեկուսացման նպաստը

Վարձու աշխատողին մեկուսացման նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ ժամանակավոր անաշխատունակության 14 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից:»:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) մեկուսացման:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող մեկուսացման նպաստը

ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց մեկուսացման նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ ժամանակավոր անաշխատունակության 14 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից:»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

~~«4) եթե վարձու աշխատողը մեկուսացման կամ ինքնամեկուսացման ընթացքում հեռավար կատարել է իր աշխատանքային պարտականությունները և վարձատրվել է (ստացել է աշխատավարձ):»:~~

«4) եթե վարձու աշխատողը մեկուսացման կամ ինքնամեկուսացման ժամանակահատվածի համար վարձատրվել է (ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) կամ 5 խախտել է մեկուսացման կամ ինքնամեկուսացման պայմանները.»:

Հոդված 7. Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. ~~Մեկուսացման նպաստի նշանակման և վճարման համար ժամանակավոր անաշխատունակության թերթիկը տրամադրվում է առողջապահության բնագավառի լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Տեղեկանքում ներառվում է վարձու աշխատողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, մեկուսացման կամ ինքնամեկուսացման~~

~~հիմքերը և ժամանակահատվածը (սկիզբը և վերջը): Ընդ որում, տեղեկանքը մեկուսացման նպաստի նշանակման և վճարման համար ներկայացվում է գործատուին կամ լիազոր մարմին: Տեղեկանքի ձևը, լրացման ու տրամադրման կարգը սահմանում է առողջապահության բնագավառի լիազոր մարմինը:»:~~

Հոդված 7. 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2020 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Եթե շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության տարածումը կանխելու նպատակով մեկուսացման կամ ինքնամեկուսացման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը և մեկուսացման նպաստ նշանակելու համար փաստաթղթերը ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից սկսած վեցամսյա ժամկետում, ապա այդ փաստաթղթերը համարվում են Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացված:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

(Պ-621-18.05.2020-ԱՍ-011/0) նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկելու համար ներկայացված բանավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Նարեկ Զեյնալյան	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-621-18.05.2020-ԱՍ-011/0) նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածը խմբագրել այնպես, որ մեկուսացված և ինքնամեկուսացված աշխատողը միաժամանակ չվարձատրվի և նպաստ չստանա: Առաջարկում եմ նախագծի 6-րդ հոդվածը խմբագրել այսպես. Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով. «4) եթե վարձու աշխատողը մեկուսացման կամ ինքնամեկուսացման ժամանակահատվածի համար վարձատրվել է (ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ) կամ 7 խախտել է մեկուսացման կամ ինքնամեկուսացման պայմանները.»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-621-18.05.2020-ԱՍ-011/0) նախագիծ	Առաջարկում եմ հանել նախագծի 7-րդ հոդվածը: Ելնելով դրանից փոխել հաջորդ հոդվածի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ԼՀԿ խմբակցություն	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-621-18.05.2020-ԱՍ-011/0) նախագիծ	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. <<Մեկուսացման նպաստն առաջին աշխատանքային օրվա համար չի վճարվում, նպաստի մնացած մասը վճարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:>>	Չի ընդունվել	Չի ընդունվել: